«ԱՌԱՋԻՆ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏԸ ԵՎ ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴԸ (ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՐԴԻԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ)» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԺՈՂՈՎԸ

ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայում հոկտեմբերի 1–2-ը տեղի ունեցավ «Առաջին աշխարհամարտը և հայ ժողովուրդը (պատմություն և արդիական խնդիրներ)» վերտառությամբ միջազգային գիտաժողով, որը նվիրված էր հայ ժողովրդի համար ճակատագրական դարձած այդ պատերազմի սանձազերծման 100-ամյա տարելիցին:

Գիտաժողովը կազմակերպել էին ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիան և Երևանի պետական համալսարանը (կազմկոմիտե՝ Յուրի Սուվարյան, Արամ Սիմոնյան, Աշոտ Մելքոնյան, Ռուբեն Սաֆրաստյան, Արարատ Աղասյան, Գևորգ Պողոսյան, Ավիկ Իսահակյան, Արմեն Մարուքյան*):*

Բացման խոսքով հանդես եկավ ԳԱԱ նախագահ, ակադեմիկոս Ռաֆիկ Մարտիրոսյանը *և նշեց, որ այս տարի լայնորեն հիշատակվում է Առաջին համաշխարհային պատերազմի մեկդարյա ցավալի հոբելյանը: Պատերազմ, որը շրջադարձային եղավ բազմաթիվ ժողովուրդների կյանքում և փոխեց աշխարհի գեոպոլիտիկ իրավիճակը. «Առաջին համաշխարհային պատերազմին մասնակցեցին առավելագույն թվով երկրներ՝ 33 պետություն, հսկայական էին նաև մարդկային կորուստները՝ 29 միլիոն»:*

Այնուհետև ողջույնի խոսք ասաց ԵՊՀ ռեկտոր Արամ Սիմոնյանը*:*

Լիագումար նիստում զեկուցումով հանդես եկավ ԳԱԱ պատմության ինստիտուտի տնօրեն Աշոտ Մելքոնյանը *(«Առաջին աշխարհամարտ–Հայոց ցեղասպանություն. պատճառներ և հետևանքներ»): Նա մասնավորապես նշեց, որ «Առաջին և Երկրորդ աշխարհամարտերի ժամանակ ռազմական գործողությունների հիմնական ծանրությունն ընկել է համապատասխանաբար ռուսական կայսրության և ԽՍՀՄ-ի վրա, սակայն բնակչության շնչին բաժին ընկած մարդկային կորուստների առումով առավելագույնս տուժել է հայ ժողովուրդը (1,5 մլն զոհ), քանի որ պատերազմի հետևանքով Օսմանյան կայսրությունում հայերը ենթարկվեցին ցեղասպանության»:*

Ելույթ ունեցան նաև ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի տնօրեն Ռուբեն Սաֆրաստյանը *(«Հայոց ցեղասպանության ծրագրի ձևավորումը. թուրքական փաստաթղթերի վերլուծություն»), Ռուսաստանի գիտությունների ակադեմիայի Համաշխարհային պատմության ինստիտուտի Ռուսաստանի, Ուկրաինայի և Բելոռուսի կենտրոնի ղեկավար, պատմական գիտությունների դոկտոր* Ալեքսանդր Շուբինը *(«Օսմանյան արշավանքը դեպի Արևելք 1918 թ.»), Հայաստանի ազգային արխիվի տնօրեն* Ամատունի Վիրաբյանը *(«Հաղորդում Հայաստանի ազգային արխիվի Հայոց ցեղասպանության վերաբերյալ փաստաթղթերի տարբեր լեզուներով հրատարակության մասին»):*

Երկու օր ընթացող գիտաժողովին ներկայացված էին 44 գիտական զեկուցումներ, որոնք քննարկվեցին մասնագիտացված առանձին բաժանմունքների նիստերում, իսկ զեկուցողները Հայաստանից, Ռուսաստանից և Հունաստանից էին:

*ԳԱԱ նախագահության նիստերի դահլիճում ընթացող «*Հայերի մասնակցությունը Առաջին աշխարհամարտին*» քննարկմանը ներկայացված էին հետևյալ թեմաները. «Հայ ազգային կուսակցությունների գործունեությունը Փոքր Հայքում Առաջին աշխարհամարտի նախօրյակին» (*Գեղամ Հովհաննիսյան*), «Առաջին համաշխարհային պատերազմի ռուս-թուրքական ռազմաճակատի նշանակությունը» (*Ռուբեն Սահակյան*), «Հայկական բարձրավանդակի ռազմավարական նշանակությունը գերմանական ստրատեգների աշխատություններում» (*Հայկ Սուքիասյան*), «Հայերի սոցիալ-տնտեսական կեցությունը Առաջին աշխարհամարտի ժամանակ (Թուրքիա և Արևմտյան Հայաստան)» (*Գևորգ Պողոսյան*), «Թուրքիայի բալկանյան ռազմավարական շրջադարձը և Արևմտյան Հայաստանի ճակատագիրը» (*Լևոն Շիրինյան*), «Առաջին աշխարհամարտի և Հայկական հարցի արտացոլումը «Արմյանսկի վեստնիկ» շաբաթաթերթում» (*Նորայր Սարուխանյան*), «Առաջին աշխարհամարտի Արևմտյան ռազմաճակատի Գեորգիևյան շքանշանակիր հայազգի զորականները» (*Կարեն Փահլավանյան*), «Առաջին աշխարհամարտն ըստ ականատես վերապրողների վկայությունների» (*Վերժինե Սվազլյան*), «Առաջին աշխարհամարտը և ամերիկահայությունը» (*Քնարիկ Ավագյան*), «Առաջին աշխարհամարտում արիությամբ աչքի ընկած և Գեորգիևյան շքանշաններով պարգևատրված հայ հերոսները» (*Մեդա Զարգարյան*), «Առաջին աշխարհամարտի մասնակից Ե. Ե. Վիշինսկին և նրա ծառայողական ցուցակը» (*Հենրիկ Խառատյան, Իրինա Կասացկայա, Ռոստոտրուդնիչեստվո*), «Բաքվի 1918 թ. հերոսամարտը. ռազմական գործողությունները և նշանակությունը» (*Գևորգ Ստեփանյան*):*

*ԳԱԱ պատմության ինստիտուտի նիստերի դահլիճում ընթացող «*Հայկական հարցը և դիվանագիտական պայքարը Առաջին աշխարհամարտի տարիներին*» բաժանմունքում քննարկվեցին հետևյալ զեկուցումները. «Հայաստանն ու Հայկական հարցը ԱՄՆ-ի 1917–1918 թթ. քաղաքականության ոլորտում» (*Գայանե Մախմուրյան*), «Հայաստանը Առաջին աշխարհամարտի տարիներին Ռուսաստանի արտաքին քաղաքականության ոլորտում» (*Ֆելիքս Մովսիսյան*), «Պայքար գրչով և ազդեցության տարածում՝ Օսմանյան Թուրքիայի մասնակցությունը Առաջին աշխարհամարտում բրիտանական ամսագրի ծաղրանկարների լույսի ներքո» (*Յակովոս Ակցողլու, Հունաստան*), «Գաղթականության խնդիրը հայ-թուրքական հարաբերություններում 1918 թ. հունիս-հոկտեմբեր. (*Կարեն Հայրապետյան*), «1915–1916 թթ. Անգլո-ֆրանս-ռուսական գաղտնի բանակցությունների լուսաբանումը հետխորհրդային հայ պատմագրության մեջ» (*Լիլիթ Հովհաննիսյան*), «Առաջին աշխարհամարտը և բրիտանական շահերը Մերձավոր Արևելքում» (*Տիգրան Թումանյան*), «1918 թ. հունիս-նոյեմբերին Կ. Պոլսում գործող հայկական պատվիրակության գործունեության լուսաբանումը մասնակիցների օրագրություններում» (*Համո Սուքիասյան*):*

*ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի նիստերի դահլիճում ընթացող «*Առաջին աշխարհամարտի և Հայոց ցեղասպանության արտացոլումը հայ և համաշխարհային գեղարվեստական գրականության ու արվեստի մեջ» *բաժանմունքում ներկայացվեցին հետևյալ թեմաները. «Ավետիք Իսահակյանի Առաջին աշխարհամարտի տարիներին գրած ստեղծագործությունները» (*Ավիկ Իսահակյան*), «Եղեռնի արձագանքները Սերո Խանզադյանի «Մեռածները հիշում են» վիպակում» (*Վահան Աղաբաբյան*), «Հայոց ցեղասպանության արտացոլումը ամերիկահայ անգլիագիր գրողների երկերում» (*Դավիթ Գասպարյան*), «Հայկական ծածկագիրը Դ. Մ. Թոմասի «Արարատ» վեպում» (*Տատյանա Ռիբալչենկո, *Ռուսաստան*), «Թումանյանը և Առաջին աշխարհամարտը» (*Վլադիմիր Կիրակոսյան*), «Առաջին համաշխարհային պատերազմը Ի. Կ. Այվազովսկու ժառանգների ստեղծագործություններում և հիշողություններում» (*Իրինա Կասացկայա, *Ռոստոտրուդնիչեստվո*), «Առաջին աշխարհամարտը Թորոս Թորոմանյանի և Յոզեֆ Ստրժիգովսկու գիտական ճակատագրերում» (*Անուշ Տեր-Մինասյան*), «Փանոս Թերլեմեզյանը և Առաջին աշխարհամարտը» (*Մերի Կիրակոսյան*), «Վարդան Մախոխյանը և Մեծ եղեռնը» (*Արա Հակոբյան*), «Ցեղասպանության արձագանքները ժամանակակից թուրք գրականության մեջ» (*Սուսաննա Աբազյան*), «Երգիչ գնդապետը. Վահան Տեր-Առաքելյան» (*Աննա Ասատրյան*), «Վալտեր Բախմանի ճանապարհորդության նշանակությունը հայկական ճարտարապետության ուսումնասիրման գործում» (Դավիթ Քերթմենջյան*), «Հայոց Մեծ եղեռնի արտացոլումը գերմանացի ականատես սպաների օրագրություններում» (*Ալբերտ Մուշեղյան*), «Թումանյանի հանդիպումները ռուսական բանակի սպաների հետ Առաջին աշխարհամարտի տարիներին» (*Սուսաննա Հովհաննիսյան*), «Վասպուրականի ավանդությունների ռուս սպաների գրառումները Առաջին աշխարհամարտի տարիներին» (*Վարդան Դևրիկյան*):*

*Գիտաժողովի երկրորդ օրը ԳԱԱ նախագահության նիստերի դահլիճում ներկայացված «Օսմանյան կայսրության իշխանությունների ցեղասպան քաղաքականությունը» քննարկմանը լսվեցին հետևյալ զեկուցումները. «Հայոց ցեղասպանության պատճառներն ու նախադրյալները ժամանակակից աշխարհաքաղաքականության (գեոպոլիտիկայի) դիտանկյունից» (*Գևորգ Խուդինյան*), «Գերմանական արխիվային վավերագրերը Առաջին աշխարհամարտի տարիներին Հայոց ցեղասպանության վերաբերյալ» (*Ստեփան Ստեփանյան*), «Ատրիների կոտորածներն Օսմանյան կայսրությունում Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ (1914–1918 թթ.). մոռացված ցեղասպանություն» (*Անահիտ Խոսրոևա*), «Բաքվի 1918 թ. ողբերգական դեպքերի ականատես ռուս գրողի վկայությունը» (*Անուշավան Զաքարյան*), «Արևմտահայ գաղթականությունն Ալեքսանդրապոլի գավառում 1914–1918 թթ.» (*Արմեն Հայրապետյան*), «Հասարակական կառույցների օժանդակությունը Ալեքսանդրապոլի գավառում ապաստանած գաղթականներին Առաջին աշխարհամարտի տարիներին» (*Կարինե Ալեքսանյան*):*

*ԳԱԱ պատմության ինստիտուտի նիստերի դահլիճում ընթացող վերջին նիստում քննարկվեցին «*Հայ ժողովրդի կորուստները Առաջին աշխարհամարտում և դրանց հատուցման խնդիրները» *՝ «Հայոց ցեղասպանության հոգեբանական տրավմայի միջսերնդային փոխանցմանն ուղղված հետազոտության*

վերաբերյալ» (Խաչատուր Գասպարյան, Գայանե Ղազարյան, Տաթևիկ Առաքելյան, Լիլիթ Մնացականյան, Արմեն Հովսեփյան*), «Հայոց ցեղասպանության ընթացքում հայերի ունեզրկման թեման թուրք պատմաբանների ուսումնասիրություններում»* (Անահիտ Աստոյան*), «Հայոց ցեղասպանության դատապարտման հայցադիմումի պատրաստման ու Միջազգային դատարանին ներկայացման հնարավորություններն ու հեռանկարները»* (Արմեն Մարուքյան*), «Հայոց ցեղասպանության խնդիրը սփյուռքահայ կազմակերպությունների փաստաթղթերում 1945–1948 թթ.»* (Քրիստինե Մելքոնյան*):*

Այնուհետև ԳԱԱ նախագահության նիստերի դահլիճում բաժանմունքների ղեկավարներն իրենց հաղորդումներով ամփոփեցին քննարկումների արդյունքները:

Գիտաժողովի փակմանը հանդես եկավ ԳԱԱ հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար Յուրի Սուվարյանը*:*

Գիտաժողովի զեկուցումները կհրատարակվեն առանձին ժողովածուով:

Առաջին աշխարհամարտի պատմության ուսումնասիրումը հանգեցնում է այն եզրակացության, որ դա սկիզբն էր աշխարհաքաղաքական մեծ ու հեռահար գործընթացների, որոնք հետագայում շարունակություն ունեցան Երկրորդ աշխարհամարտի ընթացքում ու հաջորդող տարիներին և մինչև օրս էլ շարունակվում են քրիստոնյա ժողովուրդների մաքրագործման առումով, որի առաջին ու ողբերգական մասը բաժին ընկավ հայ ժողովրդին՝ ցեղասպանությամբ և հայրենազրկումով:

ՔՆԱՐԻԿ ԱՎԱԳՅԱՆ